Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 510 - Ա
որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ ԿԱՀՈՒՅՔԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ

1.	Ծրագրի նպատակը	Հայաստանի Հանրապետության համայնքներին կահույքի տրամադրում սոցիալական աջակցության նպատակով:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	«Ֆոքըս օն չիլդրեն նաու, ինկ.» բարեգործական կազմակերպություն, 6850 Քենդի պողոտա, սենյակ 102, Ռեսեդա, Կալիֆորնիա 91355, Լոս Անջելես
4.	Ծրագրի կատարողը	«Ֆոքըս օն չիլդրեն նաու, ինկ.» բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ, քաղ. Երևան, Վիկտոր Համբարձումյան փողոց 2 շենք, 37 բնակարան, ՀՎՀՀ՝ 00130776
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Արարատի մարզ՝ Մասիսի խոշորացված համայնքի Ղուկասավան, Մասիս, Արտաշատի խոշորացված համայնք, Արտաշատ Արմավիրի մարզ՝ Մեծամոր խոշորացված համայնքի Զարթոնք, Եղեգնուտ, Նոր Արմավիր, Նոր Արտագերս, Արաքս խոշորացված համայնքի Արտիմետ, Գեղարքունիքի մարզ՝ Ճամբարակ խոշորացված համայնքի Ճամբարակ, Սյունիքի մարզ՝ Գորիսի խոշորացված համայնքի Գորիս, Վայոց ձորի մարզ՝ Արենի խոշորացված համայնքի Խաչիկ, Եղեգնաձոր խոշորացված համայնքի Եղեգնաձոր բնակավայրեր՝ բնագավառը սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	30,560,530 դրամ
7.	Բարեգործությունն ստացողը	Հայաստանի Հանրապետության Արարատի մարզ՝ Մասիսի խոշորացված համայնքի Ղուկասավանի, Մասիսի թիվ 1, Արտաշատի խոշորացված համայնք, Արտաշատի թիվ 4, Արմավիրի մարզ՝ Մեծամոր խոշորացված

		համայնքի Զարթոնքի, Եղեգնուտի, Նոր Արմավիրի, Նոր Արտագերսի, Արաքս խոշորացված համայնքի Արտիմետի, Գեղարքունիքի մարզ՝ Ճամբարակ խոշորացված համայնքի Ճամբարակի թիվ 5, Սյունիքի մարզ՝ Գորիսի խոշորացված համայնքի Գորիսի թիվ 5, Վայոց ձորի մարզ՝ Արենի խոշորացված համայնքի Խաչիկի, Եղեգնաձոր խոշորացված համայնքի Եղեգնաձորի թիվ 2 բնակավայրերի մանկապարտեզներ
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	19.07.2023 թվական - 30.12.2023 թվական
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1. Կահույքի պատվիրում և պատրաստում 20,000,000 դրամի չափով նախատեսվում է իրականացնել սկսված 19. 07. 2023 թվականից մինչև 31. 07. 2023 թվականը: 2. Կահույքի մատակարարում և տեղադրում 10,560,530 դրամի չափով սկսված 01.08.2023 թվականից մինչև 30.12.2023 թվականը:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Կահույքի մատակարարում ՝ 30,560,530 դրամի 1. Մանկական մահճակալ - 440 հատ - 14,981,500 դրամ 2. Ներքնակ - 440 հատ - 2,156,000 դրամ 3. Խաղային կենտրոն - 63 հատ - 1,682,100 դրամ 4. Պահարան - 248 հատ - 4,251,000 դրամ 5. Ճաշասեղան - 125 հատ - 1,725,180 դրամ 6. Մանկական աթոռակ - 505 հատ - 3,020, 350 դրամ 7. Նստարան-32 հատ - 326,400 դրամ 8. Աշխատասեղան - 18 հատ - 888,000 դրամ 9. Աթոռ - 62 հատ - 1,004,000 դրամ 10. Գրատախտակ - 16 հատ - 296,000 դրամ 11. Բեռնափոխադրումը՝ 230,000 դրամ
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում:

12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Համագործակցություն է նախատեսվում տեղական ինքնակառավարման մարմինների հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

27.07.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ